ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 26/11

Քաղ. Երեւան **23 մարտի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ.Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. մատի 23-ի նիստում (արձանագրություն N3/17) քննարկեց «Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ ՍՊԸ-ի կողմից 2011թ. փետրվարի 21-ին «ВДОХНОВЕНИЕ» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2009թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը:

Դիմումումին կից ներկայացված են տեղեկություններ «ВДОХНОВЕНИЕ» ապրանքային նշանի օգտագործման և գովազդի մասին տեղեկություններ, ինչպես նաև «ВДОХНОВЕНИЕ» ապրանքային նշանով մակնշված ապրանքի իրացման ցանցի մասին:

Կոլեգիայի քննարկման արդյունքների ներկայացման ժամանակ նշվեց, որ դիմողի կողմից ներկայացվել են մի շարք փաստարկներ հիշյալ ապրանքային նշանների հանրահայտության ճանաչման մասին, նշվեց նաև, որ 01.01.2009 թվականից «ВДОХНОВЕНИЕ» ապրանքային նշանով մակնշված 43430 կգ քանակով կոնֆետներ են իրացվել սպառման շուկայում (ք.Երևանի շուրջ 2400 խանութներում և մարզերի 4000 խանութներում), որը վկայում է նշված ապրանքային նշանի հանրահայտ լինելու մասին: Նշվեց նաև, որ վերը նշված ապրանքային նշանը գովազդվել է տարբեր հեռուստաընկերությունների կողմից բավականաչափ եթերաժամով, ինչը նույնպես խոսում է հանրության լայն շրջանակում դրա հայտնի լինելու հնարավորության մասին:

Ներկայացված փաստարկները համոզիչ էին բողոքարկման խորհրդի համար, քանի որ հիշյալ ապրանքային նշանը օգտագործման արդյունքում լայն ճանաչում է

ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության լայն շրջանակների համար կոնֆետներ ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածիով ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության Բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման «Կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետով և «Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին» կարգի դրույթներով

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ ՍՊԸ-ի 2011թ. փետրվարի 21-ի դիմումը եւ «ВДОХНОВЕНИЕ» բառային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչել 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԱԾՄԴ 30-րդ դասի «կոնֆետներ» ապրանքների համար:

1. Որոշման կայացման թվականը	23.03.2011
2. Հանրահայտ ապրանքային նշանի գրանցման համարը	42
3. Հանրահայտ ապրանքային նշանի անունը	«ВДОХНОВЕНИЕ»
4. Թվականը, որից սկսված ապրան-քային նշանը հանրահայտ է ճանաչ-վում ՀՀ-ում	2009
5. Հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ անվանումը եւ գտնվելու վայրը հասցեն	«Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ ՍՊԸ 0061 ք. Երևան, Մասիսի փ.31
6. Ապրանքների եւ ծառայությունների	ԱԾՄԴ 30-րդ դասի

Միջազգային դասակարգման դասերին համապատասխան խմբավորված այն ապրանքների եւ ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ ապրանքային նշանը ճանաչվել է հանրահայտ «կոնֆետներ» ապրանքների համար

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան